

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՅՆ ԴՐԱՄՆԵՐ ԵՒ ՆՈՐԱԳՈՅՆ «ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ»

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
(ՆԻՒ ԸՐՐԳԻ, ԱՄՆ)

Վերջին քառասուն տարիներուն հայկական դրամագիտության բնագա-
լառին մէջ նշանակալից իրադարձութիւններ տեղի ունեցած են: Դրամներու
քանի մը ամբողջական դասաւորումներ հրապարակուած են, բազմաթիւ կարե-
ւոր դրամագիտեր պեղուած ու դասակարգուած են, եւ զանազան հիմնարար
աշխատութիւններ՝ հրատարակուած: Թէեւ տակաւին բազմաթիւ հարցական-
ներ ու անորոշութիւններ գոյութիւն ունին, արդէն կարելի եղած է հայկական
դրամագիտության քանի մը հասարակաց յայտարարներ ու գաղափարներ
ընդհանուր համաձայնութեան մը բերել:

Այս կացութեան լոյսին տակ, Ժորժ Տըփէլյոյի եւ Անահիտ Մուշեղեանի
հեղինակակցութեամբ վերջերս լոյս տեսած աշխատութիւնը՝ «Հելլենիստական
եւ հռոմէական հայկական դրամներ (Ք. ա. Ա դար - Ք. յ. Ա դար)»¹, հակառակ
խոստմանալից նիւթերու, որոշ առումով ետ դարձ մը կը թուի ըլլալ:

Աւելի ձեռնհաս մասնագէտներու ձգելով գիրքին ամբողջական գնահա-
տումը, մեր քննութիւնը պիտի սահմանափակուի երկրորդ գլուխին՝ «Հայաստա-
նի եւ Ծոփքի առաջին թագաւորները» (անգլերէն բնագիր, էջ 31-32, հայերէն
թարգմանութիւն, էջ 33)², որ զարմանալիօրէն կարճ բովանդակութիւն մը ունի,
սակայն լի՝ զգայացունց յայտարարութիւններով:

Հեղինակները կը սկսին կտրուկ հաստատումով մը. «*Ծոփքի եւ Կոմագե-
նի թագաւորներուն թողարկած բազմաթիւ դրամներ սխալ կերպով հայկական
թագաւորութեան վերագրուած են*»: Անհասկնալի է, թէ ինչո՞ւ բնագիրը հե-
տետողական կերպով «հայկական թագաւորութիւն» («Armenian Kingdom») ձեռք
կը գերադասէ անլի Եզրիտ «Հայաստանի թագաւորութիւն» («Kingdom of
Armenian») ձեռէն³: Վերջին հաշուով, «Հայաստան» կոչուածը աշխարհագրա-
կան-քաղաքական իրականութիւն մըն էր հին աշխարհի մէջ, եւ որքան որ մեզի
յայտնի է, պատմական գրականութեան մէջ որեւէ փաստական ապացոյց մը
չկայ, որ «Հայկական թագաւորութիւն» ձեռի կիրարկումը թոյլատրէ: Միւս կող-
մէ, ինչպէս յայտնի է, «Հայոց թագաւորութիւն» հայերէնով երկու իմաստ ունի
(«Հայքի թագաւորութիւն» եւ «հայերու թագաւորութիւն»), բայց անգլերէնի մէջ
նման երկիմաստութիւն բոլորովին անգոյ է:

¹ St' u Anahit Mousheghian and Georges Depuyrot, Hellenistic and Roman Armenian Coinage (1st c. BC - 1st c. AD), Wetteren, 1999. Գիրքը լոյս տեսած է երկլեզու՝ անգլերէն եւ հայերէն:

² Հայերէն թարգմանութիւնը, ցաւալիօրէն, անգլերէն բնագրի «ստրկական», բա-
ռացի վերածում մըն է, որ ընդհանրապէս կը մեղանչէ լեզուի ոգիին դէմ: Ան նաեւ շա-
րուածքի եւ սրբագրութեան անփութութեան տուած է: Մեկնաբանական ամէն թիրի-
մացութեան խուսափելու համար, մեր քննարկումին որպէս հիմք ընդունած ենք անգլե-
րէն բնագիրը՝ մեր կողմէ կատարուած թարգմանութեամբ: Բոլոր մէջբերումները ան-
լերէն յիշեալ երկու էջերուն կը լրուին:

³ Միայն մէկ անգամ «Հայաստան» անունը որպէս աշխարհաքաղաքական միա-
տը կը գտնենք, երբ թիւս 7 ծանօթագրութիւնը կը յիշէ «Հայաստանի թագաւորները»:

ի դէպ, այս նախադասութիւնը կը բովանդակէ Կոմմագենէի թագաւորներուն նուիրում միակ յիշատակումը: Հետագայ շարադրանքին մէջ անոնց անունը բացակայ է, հետեւաբար այս նախադասութիւնը հարց մը կը դնէ՝ առանց որոյն պատասխանն իսկ փորձելու:

Հեղինակները այնուհետեւ կը ցանկագրեն Մոփքի ինը թագաւորներ, նշելով թէ «Արշակ (Ք. ա. շուրջ 90)» վերջինն էր, որմէ ետք Մեծն Տիգրան թագաւորը «հաւանաբար» Մոփք արշաւած է եւ զայն իր կայսրութեան մէջ ներգրաւած է: «Հաւանաբար» բառի կիրարկումը յոյժ հետաքրքիր է, քանի որ Պլուտարքոս վկայած է Մոփքի թագաւորութեան գրաւումը Տիգրան Բ-ի կողմէ եւ ո՛չ մէկ այլ սկզբնաղբիւր պատմիչի հաղորդումին կը հակասէ⁴:

Այս գլուխին վերջին պարբերութիւնը, այսուհանդերձ, անլի յանդուգն պնդումներու շարք մը կը բովանդակէ. «Այս ուսումնասիրութիւնը միայն նուիրում է Մոփքի ներխուժումէն ետք սկսած հայկական բուն դրամներուն: Հայ առաջին թագաւորները դրամներ չեն հատանած, ո՛չ արծաթ եւ ո՛չ ալ պրոնզ: Փաստօրէն Ջարեհի (նախքան 189 Ք. ա.), Արտաշէսի (189-160 Ք. ա.), Արտաւազդ Ա-ի (160-123 Ք. ա.), Տիգրան Ա-ի (123-96 Ք. ա.) համար դրամ յայտնի չէ»:

Այս պարբերութեան առաջին նախադասութիւնը վիճելի պնդում մը կը կատարէ. Մոփքի դրամներուն «բուն հայկական» բնոյթը կը մերժէ, մինչ ներյայտօրէն կ'ընդունի Տիգրան Բ-ի կողմէ Մոփքի ներխուժումի ու նուաճումի փաստը: Այստեղ, հեղինակները իրենք զիրենք կը հակասեն, նախօրօք ըսած էին, թէ Տիգրան «հաւանաբար» նուաճած էր Մոփքը եւ հիմա կ'ընդունին այդ նուաճումը: Անոնք կը թուին անձանօք ըլլալ կամ, անլի ճիշդ, հակած են անտեսելու Մոփքի եւ Կոմմագենէի թագաւորներու ցեղային (էթնիկ) պատկանելիութեան շուրջ առկա փաստերուն, ինչպէս եւ երկու թագաւորութիւններու մշակութային սերտ յարաբերութիւններուն՝ հայկական միջավայրին հետ:

Այսպիսի համարձակ հաստատում մը Արտաշէսեան առաջին թագաւորներու դրամներուն չգոյութեան մասին շեշտօրէն կը հակադրուի Ջարեհ Պտուկեանի, Եղիա Ներսէսեանի ու Խաչատուր Մուշեղեանի նման ուսումնասիրողներու տեսակէտներուն եւ յառաջ կը քաշուի առանց որեւէ փաստարկումի կամ յանելեալ բացատրութեան: Սոյն պնդումը կրնայ որոշ իրաւացիութիւն ունենալ, բայց կը կարծենք, թէ փաստական ու վերլուծական լուրջ հիմքի մը կը կարօտի, որ հոս բոլորովին բացակայ է:

Նման տրամաբանական հէնք մը ընձեռնելու փոխարէն, Ջարեհի դրամին վերաբերող ծանօթագրութիւնը կ'ըսէ. «Պտուկեանի եւ Ներսէսեանի կողմէ վերագրուած դրամը արդիական կեղծիք մըն է»: Ջարեհի մասին (չփոթել իրեն ժամանակակից Մոփսաց թագաւոր Ջարեհի հետ) միակ վստահելի փաստը այն է, որ ան Արտաշէս Ա-ի հայրն էր, ինչպէս վերջինին արամեաւտաւ արձանագրութիւնները կը վկայեն⁵: Բայց որեւէ փաստ գոյութիւն չունի յօգուտ Հայաստանի թագաւոր եղած ըլլալու: Արդարեւ, ո՛չ Պտուկեան եւ ո՛չ ալ Ներսէսեան յիշեալ դրամին հարազատութիւնը կ'ընդունին, ուստի անոր յիշատակումը իրենց աշխատութիւններուն մէջ ձեւական բնոյթ ունի՝ գոյութիւնը յիշած ըլլալու համար, եւ որեւէ կերպով պատմականութեան ի նպաստ փաստարկ մը չէ:

Հեղինակները չեն անդրադարձած Լեւոն Սարեանի բերած փաստերուն՝ դրամին հարազատութեան ի նպաստ⁶, եւ ո՛չ ալ տողերս գրողին յառաջ քաշած վարկածին՝ Ջարեհը նոյնացնելու Տիգրան Բ-ի աւագ զակին հետ, որ մահուան դատապարտուած էր իր հօրը դէմ ապստամբելէ ետք, եւ որ կրնար այս դրամը հատանած ըլլալ⁷:

⁴ Հմմտ. Paul Z. Bedoukian, *Coinage of the Artaxiads of Armenia* (London, 1979), p. 12.

⁵ Նոյն տեղում, էջ 7:

⁶ Հմմտ. Levon A. Saryan, *Of Forgeries and Fantasies: Two Controversial Armenian Coins*, "Armenian Review", Fall 1987.

⁷ Ste'u Vartan Matiossian, *Who was Zariadres? Some Notes On An Artaxiad Coin*, "Armenian Numismatic Journal", 1, 1995, p. 17-19.

Արտաշէս Ա-ի դրամին վերաբերող ծանօթագրութիւնը միեւնոյն անորոշութենէն կը տառապի: Հեղինակները Պտուկեանի կողմէ Արտաշէս Ա-ին վերագրուած դրամ մը կը վերագրեն Արտաւազդ Գ-ին: Պտուկեան իր կարծիքը հիմնած էր հանգուցեալ Ասպետ Տօնապետեանի կողմէ կատարուած նախընթաց ուսումնասիրութեան վրայ, իսկ այնուհետեւ Տօնապետեան փոխած էր իր կարծիքը, ինչ որ կարելի կը դարձնէ նոր նոյնացումի մը անհրաժեշտութիւնը: Սակայն, պէտք է յիշել, որ հեղինակները նորէն կարծիք մը կը կատարեն առանց որեւէ փաստարկ կամ վերլուծում կատարելու: Արտաշէսի արամէատառ սահմանաքարերուն նոյնիւրոյն եօթը աշխատութիւններ յիշատակուած են, բայց անոնցմէ ո՛չ մէկը Արտաշէսի դրամին հետ կապուած է:

Տիգրան Ա-ի դրամներուն հարցը անելի լուրջ է, քանի որ այս պարագային հեղինակները պարզապէս Պտուկեանի ու Ներսէսեանի վերագրումները մէկդի կը դնեն առանց որեւէ ծանրակշիռ փաստարկի: «*Պտուկեանի եւ Ներսէսեանի կողմէ որպէս Տիգրան Ա-ի դրամներ ներկայացած բոլոր դրամները՝ անոնք կը համարեն «փաստօրէն, Տիգրան Բ-ի շատ յստակօրէն թուագրուած դրամներ»*: Մէկ կողմ դնելով այն հարցը, թէ դրամներու վրայ եղած խորհրդանիշները կամ մենագիրները իրօք թուականն՞ր կը ներկայացնեն, ինչ որ ընդհանուր ճանաչումի արժանացած չէ, հեղինակներուն պարտականութիւնն էր իրենց պնդումը հիմնաւորող որեւէ փաստ բերել: Իսկ նման փաստ, գոնէ այս աշխատութեան մէջ, ներկայացուած չէ:

Տըփէյո եւ Մուշեղեան գիտնականներուն կողմէ Տիգրան Ա-ի վերագրուած որոշ դրամներու մասին հարցադրումներ ըրած են, բայց միշտ նոյն անհերքելի ու երկրորդ կարծիք չընդունող շեշտով: Զարմանալիօրէն, Փարիզի Ազգային Գրադարանին մէջ պահպանուած անտիոքեան դրամը, գոր Պապըլոն Տիգրան Գ-ի վերագրած էր, իսկ Սէյրիկ՝ Տիգրան Ա-ի, անոնք «Մոփքի թագաւորի մը թողարկած» դրամի կը վերածեն: Իտալացեալ այս «Մոփքի թագաւոր»-ի ինքնութիւնն ու տարեթիւները անյայտ են: Ի դէպ, վերոնշեալ դրամը իր յետնակողմին վրայ «Տիգրան թագաւոր» (Basileos Tigranoy) մակագրութիւնը կը կրէ, գոր հեղինակները կը յիշեն: Հետեւաբար, առաջին հերթին անոնք պէտք է փաստած ըլլային, որ դրամը ո՛չ Տիգրան Գ-ի եւ ոչ ալ Տիգրան Ա-ի կը պատկանի, եւ ապա, որ իսկապէս Տիգրան անունով Մոփքի թագաւոր մը գոյութիւն ունեցած է: Բացի, անշուշտ, որ թելադրել ուզած ըլլան, առանց որեւէ բացայայտ հաստատումի, որ Փոքր Տիգրանը՝ Մեծ Տիգրանի երրորդ զաւակը, ի վիճակի էր դրամ մը հատանելու Պոմպէյի ու Տիգրանի դաշնագրի (Ք. ա. 66-ի աշուն) եւ իր իսկ կողմէ հոսմէացի զօրավարին կողմէ ձերբակալուելու (Ք. ա. 66-65-ի ձմեռը, մօտաւորապէս) կարճագոյն միջոցին: Յիշենք, որ այդ դաշնագրին համաձայն, Փոքր Տիգրան Մոփքի թագաւոր նշանակուած էր: Ահաւասիկ վարկած մը որ կրնայ յառաջ քաշուիլ միայն եթէ իսկապէս փաստով, որ անտիոքեան դրամը ո՛չ Տիգրան Գ-ի եւ ոչ ալ Տիգրան Ա-ի կը պատկանի: Վերջին խօսքը դրամագէտներուն կը մնայ:

Այս համառօտ գլուխին ամենէն անընդունելի մասը այն ծանօթագրութիւնն է, որ կցուած է «*հայ առաջին թագաւորները դրամներ չեն հատանած, ո՛չ արծաթ եւ ոչ ալ պրոնզ*» պնդումին: Ան հետեւեալը կըսէ. «*Հայկական Սփիւռքի բազմաթիւ դրամագէտներ փորձած են Հայաստանի առաջին թագաւորներուն թողարկումներ վերագրել: Այս ձեւով, իրենք փորձած են հայկական դրամներու առաջնեկութիւնը կամ ժամանակակցութիւնը փաստել՝ այլ դրամներու նկատմամբ: Այս յուսահատ հետազօտութիւնը կրնայ հասկնալի ըլլալ, նկատի ունենալով հայ ժողովուրդի պատմութիւնն ու հաւաքական ինքնութեան մը անհրաժեշտութիւնը: Բոլոր արդի եւ նորագոյն ուսումնասիրութիւնները կը փաստեն, որ առաջին թագաւորները Տիգրանէն առաջ դրամ չեն հատանած*»:

(«Many numismatists from the Armenian Diaspora tried to attribute issues to the first Kings of Armenia. By this way they wanted to demonstrate the prece-

dence or the simultaneity of the Armenian Coinage on other coinages. This desperate research may be understood, considering the History of the Armenian people and the need for a collective identity. All the modern and recent studies prove that the first Kings did not strike coins before Tigranes»).

Այս պարբերութեան «անդամագնական» քննարկում մը, կը կարծենք, տեղին է. «Հայկական Սփիռքի բազմաթիւ դրամագէտներ փորձած են Հայաստանի առաջին թագաւորներուն թողարկումներ վերագրել: Այս ձեռով, իրենք փորձած են հայկական դրամներու առաջնեկութիւնը կամ ժամանակակցութիւնը փաստել՝ այլ դրամներու նկատմամբ»:

Այս հաստատումէն ընթերցողը պէտք է հետեւցնէ, որ Զ. Պտուկեան, Ե. Ներսէսեան, Լ. Սարեան եւ ուրիշներ (չիշելով հանգուցեալ Խ. Մուշեղեանը, որուն աշխատանքները ընդհանրապէս Պտուկեանի վերագրումներուն հաւանութիւն տուած են) գաղտնի օրակարգ մը ունեցած են. այս պրպտումներով հայկական դրամներու հնութիւնը փաստել: Սակայն, կարգ մը հարցումներ կարելի է բանաձեւել. հայոց թագաւորութեան դրամահատանումի սկզբնաւորութիւնը Արտաշէս Ա-ի հետ կապել ազգային կարեւորութիւն ունի: Ասիկա, ժամանակակից տեսանկիւնէ մը, այլ թագաւորութիւններու նկատմամբ որեւէ նախապատուութիւն կամ գերազանցութիւն պիտի տար: Յստակօրէն կրնանք ըսել, թէ սփիռքահայ կամ ընդհանրապէս հայ դրամագէտներուն մասին այս չափանիշներով մտածելը առնուազն պախարակելի է:

«Այս յուսահատ հետազօտութիւնը կրնայ հասկնալի ըլլալ, նկատի ունենալով հայ ժողովուրդի պատմութիւնն ու հաւաքական ինքնութեան մը անհրաժեշտութիւնը»:

Վիրաւորական է, անշուշտ, «յուսահատ» ածականի կիրարկումը, որ կը փորձէ նախորդ տողերուն եզրայանգումը հանդիսանալ եւ քաղաքական օրակարգի մը գոյութիւնը բացատրել: Այս քանի մը տողերուն մէջ ազգայինն ու ազգայնականը շփոթող արեւմտեան որոշ մտածողութեան մը տարրերը ներկայ են: Այդ մտածողութիւնը հակած է նսեմացնելու եւ արժեքրկելու այն բոլոր աշխատութիւնները, որոնց հեղինակները՝ իրենց ազգային սուկ պատկանելիութեան բերումով, ի սկզբանէ «ցեղային շեղում»ի (ethnic bias) պիտակին դատապարտուած են⁶:

Սակայն, ոչ հայ գիտնականներու կողմէ սփիռքահայ դրամագէտներու աշխատանքին տրուած դրական գնահատումը՝ առանց քաղաքական յետին մտքեր որոնելու, անոր գիտական արժեքին յաւելեալ չափանիշ մը կրնայ նկատուիլ: Արդարեւ, հին Հայաստանի դրամագիտութիւնը քաղաքական նպատակ մը չունի: Անոր հետապնդած նպատակները թրքական կամ ազերի պատմաշինարարական մտահոգութիւններէն, օրինակ, բոլորովին հեռու են: Ընդհակառակը, հայկական դրամագիտութիւնը պատմական սկզբնաղբիւրներու բերած փաստերը ամրապնդելու եւ լուսաբանելու կը ծառայէ, իսկ երբեմն՝ պատմական հետազօտութեան նոր ուղիներ կը բանայ: Այս ուղղութեամբ բազմաթիւ օրինակներ կարելի է բերել, ինչպէս դրամի մը վերագրումը՝ Մոփաց Մորփիուղի-

⁶ Նման ուսումնասիրութիւններ, ինչ խօսք, անխուսափելիօրէն գոյութիւն ունին, Հայաստանի թէ արտասահմանի մէջ, ազգային սնապարծութեան կամ ազգակեղրոն (ethnocentric) չափանիշներու օգտագործումով: Մեր նիւթն հետ կապուած օրինակ մըն է Լեւոն Օսիֆեանի «Հայաստանը եւ առաջին Արշակունիները» (Երևան, 1993) հատորը, հակառակ իր պարունակած կարգ մը տեղին մատնանշումներուն: Հեղինակը փորձած է վերականգնել Արտաշէսեան հարստութեան գոյութիւն ունեցած չըլլալու տեսակէտը՝ Զ. Ա. Ա. դարու կէսերուն Արշակունեաց սկզբնաւորութիւնը կապելով խորենացիական Վաղարշակ թագաւորին հետ, որուն որոշ դրամներ ալ կը վերագրէ: Վերջին կէտին մասին, տե՛ս Վարդան Մատթէոսեան, Հայոց Վաղարշակ թագաւորին վերագրուած դրամներուն մասին, "Armenian Numismatic Journal", June 1998, էջ 25-26:

կէս թագաւորին⁹, որ մինչեւ վերջերս Մովսէս Խորենացիի «Պատմութիւն Հայոց»ի մէջ ուրուականային ներկայութիւն մըն էր, ենթադրաբար՝ առասպելական:

Ի՞նչ է, օրինակ, Տիգրան Բ-ի դրամներուն ուսումնասիրութեան իմաստը: Ցոյց տայ, որ կարճ ժամանակով հայերը կայսրութիւն մը ունեցած են: Սակայն, այս կէտը վէճի առարկայ չէ. նոյնիսկ թուրք հեղինակները կընդունին, քանի որ Տիգրան Բ-ի ժամանակակից հռոմէական աղբիւրները յստակօրէն կը վկայեն ասիկա: Սփիւքահայ հեղինակները երբեմիցէ չեն գրած կամ պնդած, որ հայկական դրամներու հնութիւնը հայկական հաւաքական ինքնութեան կեդրոնական մասնիկ մըն է:

«Արդի եւ նորագոյն բոլոր ուսումնասիրութիւնները կը փաստեն, որ առջին թագաւորները Տիգրանէն առաջ դրամ չեն հատանած»:

Ահաւասիկ ամենէն առեղծուածային պնդումը, թերեւս, քանի որ որեւէ ցուցմունք չկայ, թէ ո՞ր «արդի եւ նորագոյն ուսումնասիրութիւնները» նկատի առնուած են:

Որպէս եզրակացութիւն, կարելի է անվերապահօրէն հաստատել, որ ժ. Տրփէլտոյի եւ Ա. Մուշեղեանի անելի քան հպանցիկ ակնարկը Մեծ Հայքի եւ Մոփքի դրամներուն վրայ, դժբախտաբար, բազմաթիւ վիճելի ու մերժելի հաստատումներ կը պարունակէ, առանց յաւելեալ մտորումի արժանի որեւէ նորութեան:

ВАРДАН МАТЕВОСЯН (Нью Джерси, США) - Древние армянские монеты и новейшие "комментарии". - В статье отмечается ряд достижений в области изучения армянских монет, не учтенный авторами вышедшей в 1999 году книги "Армянские монеты эллинистического и римского периода (1 в. до н.э. - 1 в. н.э.)" Анаит Мушегян и Джорджем Делпайро, а также выявляются неточности, сказавшиеся в рассматриваемой книге.

⁹ St'u Paul Z. Bedoukian, *Coinage of the Armenian Kingdoms of Sophene and Commagene* (Los Angeles, 1985), p. 14-15.